

© Association of Judges of the RA,  
[http://www.judge.am/index.php?option=com\\_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en](http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en). [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 2, 2003.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF TEIXEIRA DE CASTRO v. PORTUGAL - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

## ՏԵՅՄԱՆՔՆԵՐԱ ԴԵ ԿԱՍՏՈՆ ԸՆԴՂԵՄ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԳՈՐԾԸ

**CASE OF TEIXEIRA DE CASTRO v. PORTUGAL  
(Գանգատ թիվ 44/1997/828/1034)**

**Դատարանի 1998թ. հունիսի 9-ի**

### ՎՃԻՌԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը,

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի Բ կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն, նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով.

պրն Ռ. Բերնիարդո, Նախագահ, պրն Ա. Սահիլման, պրն Ն. Վալտիկոս, տկն Է. Պալմ, պրն Ի. Ֆոյգել, պրն Ա. Ն. Լոյզու, պրն Մ. Ա. Լոպես Ռոչա, պրն Բ. Ռեափիկ, պրն Վ. Բուտկիչ,

և նաև պրն Ր. Պետցոլդ, Քարտուղար, և պրն Պ. Զ. Մահոնեյ, Քարտուղարի տեղակալ, 1998թ. մարտի 26-ի և մայիսի 18-ի դռնիկակ խորհրդակցություններից հետո, 1998թ. մայիսի 18-ին ընդունել է հետևյալ վճիռը.

### ՎԱՐՈՒՅԹԸ

1.

Ժը Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից («Հանձնաժողով») և Պորտուգալիայի կառավարության կողմից («Կառավարություն») Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում Դատարան է հանձնվել համապատասխանաբար 1997թ. ապրիլի 16-ին և 1997թ. հունիսի 17-ին: Գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա 1994թ. հոկտեմբերի 24-ին Պորտուգալիայի քաղաքացի պրն Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյի կողմից Պորտուգալիայի Հանրապետության դեմ Հանձնաժողով ներկայացված գանգատը (թիվ 25829/94):

Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և Պորտուգալիայի այն հայտարարության վրա, որով նա ճանաչում էր Դատարանի պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված): Կառավարության գանգատը հիմնված էր 48-րդ հոդվածի վրա: Հանձնաժողովը և Կառավարությունն առաջարկել են որոշել, թե արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածով, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 8-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3(d) կետի համաձայն կատարված հարցմանն ի պատասխան՝ դիմողը հայտնել է, որ ցանկանում է մասնակցել դատաքննությանը և նշանակել է իր շահերը ներկայացնող փաստաբանի (31-րդ

կանոն): Նախագահը փաստաբանին իրավունք է տվել օգտագործած պորտուգալերենը (28-րդ կանոնի 3-րդ կետ):

3. Պալատի կազմում ընդգրկված էին չորս պատասխանական կառավագայից ընտրված դատավորը (Կոնվենցիայի 43-րդ հոդված) և պար Ռ. Ռիստականը՝ Դատարանի նախագահը (21-րդ կանոնի 3-րդ (b) կետ):

1997թ. ապրիլի 28-ին Նախագահը, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս յոթ անդամներին, այն է՝ պար Ա. Սահմանին, պար Ն. Վալտիկոսին, տես Ե. Պալմին, պար Ի. Ֆոյգելին, պար Ա. Ն. Լոյզուին, պար Բ. Ռեպիկին և պար Վ. Բուտկիչին (Կոնվենցիայի 43-րդ հոդված և Կանոնակարգի 21-րդ կանոնի 4-րդ կետ): Հետագայում պար Ռ. Բերնհարդտը՝ Դատարանի նախագահի տեղակալը, փոխարինել է պար Ռիստականը, որը մահացել է 1998թ. փետրվարի 18-ին (21-րդ կանոնի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

4. Պար Ռիստականը (21-րդ կանոնի 6-րդ կետ), Քարտուղարի միջոցով, ընթացակարգի կապակցությամբ խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի փաստաբանի հետ (39-րդ կանոնի 1-ին կետ և 40-րդ կանոն): Կատարված կարգադրության հիման վրա, Քարտուղարը 1997թ. հոկտեմբերի 20-ին և հոկտեմբերի 22-ին համապատասխանաբար ստացել է Կառավարության և դիմողի գրավոր բացատրությունները: Գրավոր բացատրությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 1997թ. նոյեմբերի 12-ին և դեկտեմբերի 5-ին տրված երկու փաստաթղթերով դիմողը ներկայացրել է Կոնվենցիայի 50-րդ հոդվածի առնչությամբ իր պահանջները: 1998թ. մարտի 26-ին Դատարանը, այնուամենայնիվ, որոշել է քննության առնել այդ պահանջները: 1997թ. նոյեմբերի 17-ին Հանձնաժողովի քարտուղարը՝ Դատարանի քարտուղարին տեղեկացրել է, որ պատվիրակն իր դիտողությունները կներկայացնի լսումների ժամանակ:

5. 1997թ. նոյեմբերի 16-ին պար Ռիստականը թույլատրել է Լոնդոնում կենտրոնական գրասենյակ ունեցող՝ մարդու իրավունքների հարցերով գրաղվող «Արդարադատություն» հասարակական կազմակերպությանը ներկայացնել իր գրավոր դիտողությունները՝ (դրանք պետք է քարտուղարություն ուղարկվեն մինչև 30.01.88թ.) պայմանով, որ դրանք համապատասխանեն որոշակի պահանջների:

6. 1998թ. հունվարի 30-ին Նախագահի կարգադրությունների հիման վրա Քարտուղարի ներկայացրած պահանջին ի պատասխան՝ Հանձնաժողովը ներկայացրել է իր կողմից քննված գործը:

7. Նախագահի որոշման համաձայն՝ դռնբաց նիստը տեղի է ունեցել Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1998թ. մարտի 24-ին: Մինչ այդ Դատարանն անց էր կացրել նախապատրաստական նիստ:

Դատարանում կողմերին ներկայացնում էին՝  
ա) Կառավարությունը.

պար Ա. Շենրիկես Գասպարը,  
Գլխավոր դատախազի տեղակալ,

ներկայացուցիչ,

պար Սիմաս Սանտոսը,  
Գլխավոր դատախազի տեղակալ,  
Գերազույն դատարան  
(Քրեական բաժանմունք),

խորհրդատու,

բ) Հանձնաժողովը՝  
պար Ի. Կաբրալ Բարետոն,

պատվիրակ,

գ) դիմողին՝  
պար Զ. Լույրերոն և  
օր. Ռ. Մալվար Լույրերոն,  
երկուսն էլ Վիլա Նովա դե Ֆամալիկաոյի  
փաստաբաններից,

փաստաբաններ:

Դատարանը լսել է պրո Կաբրալ Բարետոյի, պրո Լույրերոյի, պրո Հենրիկես Գասպարի և պրո Սիմաս Սանտոսի ելույթները:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. Գործի հանգամանքները

8. Պրո Ֆրանսիսկո Տեյբուեյրա դե Կաստրոն՝ Պորտուգալիայի քաղաքացի, ծնվել է 1955թ. և բնակվում է Կամպելոսում: Գործին առնչվող ժամանակահատվածում նա աշխատում էր տեքստիլ ֆաբրիկայում: Բանտից ազատվելուց հետո նա աշխատանք չի գտել:

### Ա. Երկու ոստիկանների միջամտությունը և դիմողի ձերբակալությունը

9. Թմրանյութերի առևտուրը վերահսկելու գործողությունների կապակցությամբ Յասարակական անվտանգության ոստիկանության (PSP) երկու ծպտյալ ոստիկաններ՝ Ֆամալիկաոյի ոստիկանությունից, տարբեր աշխատում մոտեցել են ոմն Վ. Ս.-ի: Նա կասկածվում էր թմրանյութերի մանր առևտուրի մեջ, մասնավորապես, իր սեփական գործածության համար թմրանյութի՝ հիմնականում հաշիշի, համար վճարելու համար: Ոստիկանները մտադիր են եղել Վ. Ս.-ի միջոցով պարզել թմրանյութերի մատակարարին և առաջարկել են նրանց գնել մի քանի կիլոգրամ հաշիշ: Չիմանալով, որ նրանք ոստիկանության աշխատակիցներ են, Վ. Ս.-ն համաձայնել է մատակարար գտնել: Այնուամենայնիվ, չնայած երկու ոստիկանների ճնշմանը նա չի կարողացել գտնել որևէ մեկի:

10. 1992թ. դեկտեմբերի 30-ին՝ կեսգիշերից փոքր ինչ վաղ երկու ոստիկանները գնացել են Վ. Ս.-ի տուն՝ ասելով, որ ցանկանում են հերոին գնել: Վերջինս նշել է Ֆրանսիսկո Տեյբուեյրա դե Կաստրոյի անունը՝ որպես մի անձ, ով կարող է հերոին գտնել, սակայն, նա չգիտեր նրա հասցեն և պետք է այն ձեռք բերեր ոմն Ֆ. Օ.-ից: Այնուհետև նրանք չորսով գնացել են դիմողի տուն՝ հերոին գնել ցանկացողների մեքենայով: Ֆ. Օ.-ի կանչով դիմողը դուրս է եկել տնից և նստել մեքենան, որի մեջ նրան Վ. Ս.-ի հետ սպասում էին երկու ոստիկանները: Վերջիններս ասել են, որ ցանկանում են գնել 20 գրամ հերոին՝ 200.000 էսկուդոյով (PTE) և ներկայացրել են Պորտուգալիայի բանկի չեկեր:

11. Պրո Տեյբուեյրա դե Կաստրոն համաձայնվել է հերոին տրամադրել, Ֆ.Օ.-ի հետ, իր մեքենայով, գնացել է մեկ ուրիշ՝ Զ. Պ. Օ.-ի տուն: Վերջինս մեկ ուրիշից ծեռք է բերել երեք սաշետ հերոին, մեկը՝ 10 գրամ, մյուս երկուսը՝ 5-ական գրամ կշռով, և վերադառնալով այն տվել է դիմողին. թեև հերոինի ճշգրիտ գինը հայտնի չէ, սակայն դրա դիմաց վճարված գումարը գերազանցել է 100.000 PTE-ն:

12. Դիմողն այնուհետև թմրանյութը տարել է Վ. Ս.-ի տուն, վերջինս այդ ժամանակ վերադարձել էր այնտեղ, և երկու ոստիկանները սպասում էին դրսում: Գործարքը տեղի է ունեցել տանը: Երկու ոստիկանները Վ. Ս.-ի հրավերով մտել են տուն, դիմողը մի սաշետը հանել է գրամից, և այդ պահին էլ երկու ոստիկանները բացահայտել են իրենց ինքնությունը և ձերբակալել դիմողին, Վ. Ս.-ին և Ֆ. Օ.-ին՝ ժամը 2-ից քիչ առաջ: Նրանք խուզարկել են երեքին էլ և դիմողի մոտ հայտնաբերել են մյուս երկու սաշետները, կանչիկ 43.000 PTE և ոսկյա ապարանջան:

### Բ. Վարույթի գարգացումը

#### 1. Նախնական քննություն

13. Դիմողն այնուհետև բերվել է քննող դատավորի մոտ՝ Ֆամալիկաոյի քրեական դատարանում, և կալանավորվել է մինչև դատաքննությունը:

14. 1993թ. հունվարի 29-ին նա դիմել է իրեն կալանքից ազատելու խնդրանքով: Նա վիճարկել է, որ իր կալանավորումն անօրինական է և խախտում է կոնվենցիայի 3-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածները: Ըստ նրա՝ իր կալանավորումը եղել է երկու ոստիկանների անբարոյական և անօրինական վարքագծի արդյունք, քանի որ ինքը հանցագործություն է գործել սոսկ և բացառապես նրանց դրդնամբ: Նրանք գործել են որպես «սադրիչ գործակալներ», մասնավորապես, քանի որ նրանք չեն իրականացրել

բնրանյութերի առևտությունը՝ դատարանի կարգադրության հիման վրա:

15. Զննող դատավորը 1993թ. փետրվարի 16-ի որոշմամբ մերժել է այդ դիմումը, որն անփոփոխ է մնացել Օպորտոյի վերաքննիչ դատարանի որոշմամբ:

16. Դիմողը habeas corpus-ի երկու դիմում է ներկայացրել Գերագույն դատարան, որոնք մերժվել են 1993թ. մարտի 11-ին և մայիսի 13-ին: Գերագույն դատարանը մայիսի 13-ի իր որոշման մեջ նշել է՝ չնայած նրան, որ երկու ոստիկանները գործել են որպես «սադրիչներ» հերոինի առևտություն, այնուամենայնիվ, դիմողի կալանավորումն արդարացվում էր նրանով, որ ոստիկանները նրա մոտ են գտել հերոինը:

17. 1993թ. օգոստոսի 26-ին ներկայացրել է իր միջնորդությունները դիմողի և Վ. Ս.-ի առնչությամբ: Նա մեղադրանք չի ներկայացրել ընդուն մյուս երկուսի՝ Ֆ. Օ.-ի և Զ. Պ. Օ.-ի:

18. Գործն ուղարկվել է Սանտո Տիրոսոյի քրեական դատարան:

## 2. Դատաքննությունը և վերաքննությունը

### ա/ Սանտո Տիրոսոյի քրեական դատարանում

19. Նիստը տեղի է ունեցել 1993թ. նոյեմբերի 25-ին, որի ընթացքում հարցաքննվել են մի քանի վկաներ, այդ թվում՝ երկու ոստիկանները և Ֆ. Օ.-ն:

20. 1993թ. դեկտեմբերի 6-ին դատարանը մեղավոր է ճանաչել դիմողին և դատապարտել 6 տարվա ազատազրկման: Դատարանը Վ. Ս.-ին՝ որպես պատժամիջոց, նշանակել է 20 օրվա ազատազրկմանը համարժեք տուգամք: Դատարանը գտել է, որ «ծպտյալ» գործակալների կամ նույնիսկ «սադրիչ գործակալների» օգտագործումը չի արգելվում ներպետական օրենսդրությամբ, պայմանով, որ մեղադրյալի անձնական ազատության սահմանափակումն արդարացվում է այնպիսի արժեքներով, որոնք գերակայում են այդ ազատության նկատմամբ: Քանի որ դիմողին սկզբում նոտեցել է Ֆ. Օ.-ն, PSP աշխատակիցների վարքագիծը «վճռորոշ» չի եղել հանցագործության կատարման համար: Դատարանը նշել է, որ ինքն իր եզրահանգմանը եկել է վկաների, Ֆ. Օ.-ի, Վ. Ս.-ի՝ հանցակցի, դիմողի, իսկ «հիմնականում» երկու ոստիկանների վկայությունների հիման վրա:

### բ/ Գերագույն դատարանում

21. 1993թ. դեկտեմբերի 14-ին դիմողն այդ որոշումը գանգատարկել է Գերագույն դատարան: Նա գանգատվել է ընդուն իր՝ արդար դատաքննության իրավունքի խախտման՝ և, inter alia, հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա:

22. 1994թ. մայիսի 5-ի դատավճռով Գերագույն դատարանը մերժել է նրա գանգատը և անփոփոխ է թողել գանգատարկված դատավճիռը՝ նշելով.

« Տվյալ գործում անվիճելի է, որ PSP աշխատակիցները չափազանց ճնշում են գործադրել՝ մինչև հասել են ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյին: Սակայն, միայն դա պետք է լիներ բնական ընթացքը: Ուստիկանները գիտեին, որ Վ. Ս.-ն թմրանյութ է օգտագործում և փորձում էին բացահայտել նրան թմրանյութ մատակարարողին: Քանի որ հաշիշ չկար, նրանք փորձել են ձեռք բերել հերոին, և հանդիպել են ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյին, որը համաձայնել է նրանց կեղծ առաջարկներին, քանի որ նպատակ է ունեցել շահույթ ստանալ այդ գործարքից՝ շահարկելով մեր օրերի մեծագույն պատուհասը...»

PSP աշխատակիցների համառությունը տվել է իր արդյունքը, քանի որ նրանք կարողացել են ձերբակալել դիմողին՝ զգալի քանակությամբ թմրանյութ ունենալու համար:

Ավելին, որպես ֆամալիկայոյի ոստիկանատան՝ Յասարակական անվտանգության ոստիկանության աշխատակիցներ՝ ոստիկանները ... գործել են իբրև քրեական հետաքննիչներ (Քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդված)՝ այն օրենքով իրենց վերապահված լիազորությունների հիման վրա, որը նրանց հնարավորություն է տալիս առանց ավելի բարձր մարմինների դիմելու՝ ձեռք բերել տեղեկատվություն հանցագործությունների մասին, պարզել հանցագործների ինքնությունը և ձեռնարկել ցանկացած քայլ, որն անհրաժեշտ և անհետաձգելի է ապացույցների հավաքելու համար (Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ կետ):

... Ոստիկանության աշխատակիցները ... քրեական գործի վարույթում գործում են որպես դատարանի պաշտոնյաներ, սակայն դա չի խոչընդոտում նրանց, օրենքով հատուկ սահմանված հանգամանքներում, իրենց չպատվիրակված լիազորություններն իրականացնելու ընթացքում ձեռնարկել դատավարական քայլեր: Ինչպես նկատել է դատախազը, PSP աշխատակիցները գործել են օրենքի շրջանակներում, և ձեռք բերած ապացույցը նրանց վարքագիծը չի դարձնում անընդունելի:

Այս հանգամանքներից ելնելով՝ ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյի բողոքը լիովին անհիմն է:

Այս հետևություններից ելնելով՝ Գերագույն դատարանը մերժում է բողոքը և հաստատում է բողոքարկված դատավճորի բոլոր դրույթները»:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՐԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1983թ. դեկտեմբերի 13-ի թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը

23. Թմրանյութերի առևտուրը կանխելու մասին 1983թ. դեկտեմբերի 13-ի թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագրի համապատասխան դրույթները նախատեսում են.

### Հոդված 23, կետ 1

«Յուրաքանչյուր, ոք, ով առանց օրինական թույլտվության աճեցնում, արտադրում, արդյունաբերում, մատակարարում, վաճառքի և հանում, վաճառում, բաշխում, գնում կամ, որևէ կարգավիճակով, ստանում, այլ անձանցից ձեռք է բերում, տեղափոխում, ներմուծում է երկիր կամ արտահանում երկրից կամ անօրինական կերպով պահում է, բացի 36-որդ հոդվածում նշված նպատակներից, 1-3 առյուսակներում նշված նյութեր կամ պատրաստուկներ, ենթակա և 6-12 տարվա ազատագրկման և տուգանքի՝ 50.000- 5.000.000 էսկուդո»:

### Հոդված 52

«1. Նետաքննիչը, որը նախնական քննության ընթացքում և առանց իր ինքնությունը բացահայտելու կամ անձանք, կամ երրորդ անձի միջոցով ընդունում է թմրանյութի կամ այլ հոգեմետ նյութերի առաջարկ, ենթակա չէ պատասխանատվության ննան արարքի համար»:

Նման գործողության մասին գեկույցը կցվում է գործին՝ առավելագույնը 24 ժամվա ընթացքում»:

24. Այժմ թմրանյութերի առևտրին վերաբերում է 1993թ. հունվարի 22-ի թիվ 15/93 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը: Թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագրի 52 հոդվածը, առանց նյութական փոփոխության, վերարտադրված է նոր հրամանագրի 59 հոդվածում:

### Բ. Քրեական դատավարության օրենսգիրը

25. Սույն գործին վերաբերող՝ քրեական դատավարության օրենսգրքի հիմնական դրույթները նախատեսում են.

### Հոդված 126

«1. Խոշտանգումների, ուժի կիրառման կամ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույց անվավեր է և անընդունելի:

2. Նման միջոցներով ձեռք բերված ապացույցը համարվում է ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցով ձեռք բերված, նույնիսկ եթք զոհը համաձայն է եղել ա/ միջամտություն անձի իր կամքն արտահայտելու ազատությանը կամ որոշում կայացնելուն՝ վատ վերաբերմունքի, վիրավորանքի, ցանկացած այլ մեթոդի, հիպնոսի միջոցով կամ դաժան կամ նվաստացուցիչ միջոցների կիրառմամբ,

3. Եթե ապացույցը ձեռք է բերվել այնպիսի միջոցներով, որոնք սույն հոդվածի համաձայն հանդիսանում են հանցագործություն, այն կարող է օգտագործվել միայն

այն անձանց հետապնդելու համար, որոնք այդ ճանապարհով ձեռք են բերել տվյալ ապացույցը»:

### Հոդված 241

«Դատախազը տեղեկացվում է հանցագործության կատարման մասին իր սեփական հետաքրննության, հանցագործությունը հետաքրննելու համար պատասխանատու ոստիկանական աշխատակիցների կատարած հետաքրննության միջոցով, կամ եթե հանցագործության մասին հայտնվում է համաձայն հետևյալ դրույթների»:

### Հոդված 242

«Նույնիսկ եթե հանցագործի ինքնությունը հայտնի չէ, հանցագործության մասին հայտնվում է մեղադրանքի մարմիններին».

ա/ ոստիկանության կողմից ցանկացած հանցագործության մասին, որը հայտնի է դարձել նրանց,

...»:

## Գ. Նախադեպային իրավունքը և իրավական տեսությունը

26. Որոշակի պայմաններով գերագույն դատարանն ընդունում է «ինֆիլտրատորների» օգտագործումը թմրանյութերի առևտությունը (1990թ. հունիսի 12-ի դատավճիռը, BMJ թիվ 398, էջ 282, 1993թ. հունվարի 14-ի դատավճիռը, Col. Jur. (STJ), 1993-I էջ 270, 1994թ. մայիսի 5, Col. Jur. (STJ), 1995-II, էջ 238, 1995թ. հուլիսի 6, Col. Jur. (STJ), 1995-II, էջ 261 և 1995թ. նոյեմբերի 2, Col. Jur. (STJ), 1995-III, էջ 218):

27. Պորտուգալիայում իրավական թեմայով գրողները (և այլ եվրոպական երկրներում) ընդիմանուր «ինֆիլտրատոր» հասկացության մեջ տարբերակում են կատարում երկու հասկացությունների՝ «ծպտյալ գործակալի» և «սաղրիչ գործակալի» միջև։ Առաջինն անձ է, ով սահմանափակվում է տեղեկություններ հավաքելով, մինչդեռ մյուսը փաստացիորեն հրահրում է մարդկանց հանցագործության կատարման։ Պորտուգալիայում, գործին առնչվող ժամանակահատվածում գործող օրենսդրության համաձայն, իրավական փորձագետները «ծպտյալ գործակալների» ձեռք բերած ապացույցները հանարել են ընդունելի, սակայն, ավելի պահպանողական են եղել «սաղրիչ գործակալների» ձեռք բերած ապացույցների առումով։

## ԱԱՐՈՒՅԹԹ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

28. Պրո Տեյքսեյրա դե Կաստրոն դիմել է Հանձնաժողով 1994թ. հոկտեմբերի 24-ին։ Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ նա պնդել է, որ խախտվել է արդար դատաքրննության իր իրավունքը, քանի որ իրեն հանցագործություն կատարելուն իրահել են ոստիկանության աշխատակիցները, որի համար էլ ինքը դատապարտվել է։ Ըստ նրա՝ այդ հանգամանքները հանդիսանում են նաև 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում, քանի որ, ի լրումն, իր նկատմամբ դրսնորվել է խորական վերաբերնունք, ինչն արտահայտվում է նրանում, որ իրեն նշանակվել է ծանր պատիժ, մինչդեռ գործում ներգրավված մյուս անձինք կամ չեն հետապնդվել, կամ նրանց նշանակվել է բերև պատիժ։

29. 1996թ. հունիսի 24-ին Հանձնաժողովը գանգատն ընդունելի է հայտարարել այն մասով, որը վերաբերում էր դատավարության արդարացիությանը։ մնացած մասով գանգատն անընդունելի է հայտարարվել։ 1997թ. փետրվարի 25-ի իր գեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (տասներեք ձայնով՝ ընդդեմ մեկի)։

## ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

30. Դատարանին ուղղված բացատրություններում կառավարությունը խնդրել է «վճռել, որ սույն գործում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել»։

## 1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻճԱՐԿՈՂ ԽԱԽՏՈՒՄ

31. Պին Տեյքսեյրա դե Կաստրոն գանգատվել է, որ ինքը զրկվել է արդար դատաքննությունից, քանի որ իրեն հանցագործություն կատարելուն դրդել են ծպտյալ ոստիկանները, որի համար ինքը դատապարտվել է: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հողվածի վրա, որի համապատասխան հատվածը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, եթե որոշվում են ... նրա դեմ ցանկացած քրեական մեղադրանք, իրավունք ունի արդար դատաքննության ... ժամկետում ... դատարանի կողմից»:

Նա նշել է, որ ինքը նախկինում չի ունեցել դատվածություն և երբեք չէր գործի այդ հանցագործությունը, եթե չիներ «սադրիչ գործակալների» միջամտությունը: Ի լրումն, ոստիկանության աշխատակիցները գործել են իրենց սեփական նախաձեռնությամբ՝ առանց դատարանների վերահսկողության և առանց որևէ նախնական հետաքննության առկայության:

32. Կառավարությունը նշել է, որ մեծ թվով պետություններ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ընդունում են հետաքննչական որոշակի միջոցների օգտագործումը, մասնավորապես, թմրանյութերի առևտուրի դեմ պայքարում: Հասարակությունն ստիպված է գտնել որոշակի մեթոդներ՝ նման բնույթի հանցավոր գործունեությունը կանխելու համար, որը խարիսխում է ժողովրդավարական հասարակությունների հիմքերը: Թիվ 430/83 օրենսդրական իրանանագրի 52-րդ հոդվածը, որը կիրառելի է սույն գործի փաստերի նկատմամբ, և, անշուշտ, Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի առևտուրի դեմ 1988թ. կոնվենցիայի և Հանցագործություններից ստացված միջոցների լվացման, առգրավման և բռնագրավման մասին եվրոպայի խորհրդի 1990թ. կոնվենցիան թույլատրում են ծպտյալ գործակալների օգտագործումը, որոնց դերը, այնուամենայնիվ, ոչ մի ընդհանուր կաա չունի «սադրիչ գործակալների» հետ: Ավելին, Քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի 1-ին և 2(ա) կետերը սահմանում են բարձր չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն, եթե ապացույցների ձեռքբերման միջոցները համարվեն լեզիտիմ և օրինական:

Սույն գործում ներգրավված երկու ոստիկանները չեն կարող բնութագրվել որպես «սադրիչ գործակալներ»: Տարբերակում պետք է կատարվի այն դեպքերի միջև, եթե ծպտյալ գործակալների գործողությունները հանգեցրել են հանցավոր դիտավորության, որը նախկինում գոյություն չի ունեցել, և եթե հանցագործն արդեն հակված է եղել հանցագործություն կատարելու: Սույն գործում ոստիկանները պարզապես բացահայտել են թաքնված, նախապես գոյություն ունեցած հանցավոր մտադրություն՝ պին Տեյքսեյրա դե Կաստրոյին հնարավորություն տալով իրացնելու այդ մտադրությունը: Ֆ. Օ.-ն (հանցակիցներից մեկը) դիմողի վրա ճնշում չի գործադրել, դիմողն անմիջապես հետաքրքրություն է ցուցաբերել թմրանյութերի ձեռքբերման և գործադրի մեջ մտնելու հարցում: Ի լրումն, դիմողին ձերբակալելու պահին նրա մոտ եղել է ավելի մեծ քանակությամբ թմրանյութ, քան «գնորդները» խնդրել էին:

Վերջապես, դատավարության ընթացքում պին Տեյքսեյրա դե Կաստրոն հնարավորություն է ունեցել հարցաքննելու երկու ոստիկաններին և մյուս վկաններին ու վիճարկել նրանց փաստարկները: Գերազույն դատարանն իր դատավճիռը հիմնավորել է ոչ միայն ոստիկանների միջամտությամբ, այլ նաև այլ ապացույցներով: Ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ արդարացի դատավարությունը խաթարվել է:

33. Հանձնաժողովը գտել է, որ հանցագործությունը կատարվել է, և դիմողը դատապարտվել է ծանր պատժի՝ հիմնականում, եթե ոչ բացառապես, ոստիկանության աշխատակիցների գործողությունների շնորհիվ: Հետևաբար, ոստիկանները հրահրել էին քրեական գործունեություն, որն այլապես տեղի չէր ունենա: Այս իրավիճակն ազդեցություն է ունեցել դատավարության արդարացիության վրա:

34. Դատարանը կրկնում է, որ ապացույցների ընդունելիության հարցը հիմնականում ներպետական օրենսդրությամբ կարգավորվող հարց է և, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները: Համաձայն կոնվենցիայի՝ Դատարանի խնդիրն է ոչ թե որոշել՝ թե արդյոք վկայի ցուցանիւքը ճանաչել ապացույց, այլ դատավարությունը՝

որպես ամբողջություն, ներառյալ՝ ապացույց ձեռք բերելու միջոցը, արդարացի է (տես՝ *inter alia*, Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների 1997թ. ապրիլի 23-ի վճիռը որոշումների և վճիռների ժողովածու, 1997թ. էջ 711, կետ 50):

35. Մասնավորապես, Կոնվենցիան չի արգելում քրեական գործի վարույթի հետաքննության փուլում, եթե պահանջում է հանցագործության բնույթը, այնպիսի աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք անանուն տեղեկատուներն են: Այնուամենայնիվ, այլ խնդիր է նրանց վկայությունների հետազա օգտագործումը դատարանի կողմից մեղադրյալին մեղավոր ճանաչելիս (տես՝ *mutatis mutandis*, Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների 1998թ. նոյեմբերի 20-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 166, էջ 21, կետ 44):

36. Ծառայալ գործակալների օգտագործումը պետք է սահմանափակվի և պետք է երաշխիքներ նախատեսված լինեն նույնիսկ թմրանյութերի առևտությունը դեմ պայքարին վերաբերող գործերում: Թեև կազմակերպված հանցավորության աճը, անկասկած, պահանջում է համապատասխան միջոցների ծեռնարկում, արդարադատության արդարացի իրականացումը, այնուամենայնիվ, էական տեղ է գրադեցնում (տես՝ Դեկորտն ընդրեմ Բելգիայի 1970թ. հունվարի 17-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 11, էջ 15, կետ 25), ինչը չի կարող զոհաբերվել հանուն նպատակահարմարության: 6-րդ հոդվածում ամրագրված՝ արդարացիության ընդհանուր պահանջները կիրառվում են բոլոր տեսակի քրեական հանցագործությունների վերաբերյալ դատավարությունների նկատմամբ՝ ամենաաննշաններից մինչև ամենախճճվածը: Դասարակական շահը չի կարող արդարացնել ոստիկանների հրահրման արդյունքում ձեռք բերված ապացույցի օգտագործումը:

37. Դատարանը նշում է, որ, առաջին՝ սույն գործը տարբերվում է Լյուդին ընդդեմ Շվեյցարիայի գործից, որում գործում ներգրավված ոստիկանության աշխատակիցները երդում են տվել, քննող դատավորը տեղյակ չի եղել նրանց առաքելությանը, և շվեյցարական իշխանությունները՝ տեղեկացված լինելով գերմանական ոստիկանության կողմից, սկսել են նախնական քննություն: Ոստիկանության աշխատակիցների դերը սահմանափակվել է ծառայալ գործակալի դերով:

38. Սույն գործում, անհրաժեշտ է որոշել՝ թե արդյոք երկու ոստիկանների գործունեությունը դուրս է եկել ծառայալ գործակալների գործունեության շրջանակներից: Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի առարկել, որ ոստիկանների միջամտությունը տեղի է ունեցել որպես թմրանյութերի առևտությունը պայքարի միջոցառումների մաս և վերահսկվել է դատավորի կողմից: Զկա վկայություն նաև առ այն, որ իրավասու մարմինները հիմք են ունեցել կասկածելու, որ պրն Տեյքսեյրա դե Կաստրոն թմրանյութերի առևտրական էր, ընդհակառակն, նա չի ունեցել որևէ դատվածություն և նրա առնչությամբ նախնական հետաքննություն չի նախաձեռնվել: Անշուշտ, նրա մասին հայտնի չի եղել ոստիկաններին, որոնք նրա հետ կապ են հաստատել Վ.Ս.-ի և Ֆ.Օ.-ի միայն միջնորդությամբ (տես՝ վերը կետ 10):

Ավելին, թմրանյութը դիմողի տանը չի եղել, նա դրանք ձեռք է բերել երրորդ անձից, որն էլ իր հերթին այն ձեռք է բերել մեկ ուրիշից (տես՝ կետ 11): Գերագույն դատարանի 1994թ. մայիսի 5-ի դատավճիռը չի նշում նաև, որ ձերբակալման ժամանակ դիմողի մոտ հայտնաբերվել է ոստիկանների պահանջած քանակությունից ավելին: Զկա նաև ապացույց ի պաշտպանություն Կառավարության այն փաստարկի, որ դիմողը նախապես հակված է եղել հանցագործություններ կատարելու: Այս հանգամանքներից բխող անհրաժեշտ հետևողական այն է, որ երկու ոստիկանները չեն սահմանափակել պրն Տեյքսեյրա դե Կաստրոյի քրեական գործողությունը՝ հիմնականում պասիվ ձևով հետաքննելով, այլ գործել են ազդեցություն, այն է՝ դրդել են հանցագործություն կատարելուն:

Ի վերջո Դատարանը նշում է, որ իրենց որոշումներում ներպետական դատարանները նշել են, որ դիմողը մեղավոր է ճանաչվել հիմնականում երկու ոստիկանների ցուցմունքների հիման վրա:

39. Ելնելով այս դատողությունից՝ Դատարանը եզրակացնում է, որ երկու ոստիկանների գործողությունները դուրս են եկել ծառայալ գործակալների գործողությունների շրջանակից, քանի որ նրանք հրահրել են հանցագործությունը, և չկա որևէ վկայություն այն բանի, որ առանց նրանց միջամտության հանցագործությունը տեղի կունենար: Այդ միջամտությունը և դրա օգտագործումը

վիճարկվող քրեական վարույթում նշանակում է, որ դիմողը որոշակիորեն գրկվել է արդարացի դատաքննությունից: Յետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

## II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վիճարկվող խախտում

40. Յանձնաժողովին ուղղված իր գանգատում դիմողը նշել է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որն արգելում է «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերնունքը կամ պատիժը»:

41. Դատարանը նկատում է, որ ոչ դիմողը, ոչ Կառավարությունը, ոչ Յանձնաժողովի պատվիրակն այս կապակցությամբ որևէ փաստարկ չեն ներկայացրել: Դատարանը որևէ հիմք չի գտնում այս հարցն իր նախաձեռնությամբ քննության առնելու համար:

## III. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վիճարկվող խախտում

42. Պրո Տեյքսեյրա դե Կաստրոն պնդել է, որ վիճարկվող հանգամանքները հանդիսանում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Այդ հոդվածը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, հնչանական անկարգության կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

43. Յաշվի առնելով 39-րդ կետում նշված եզրահանգումը՝ Դատարանը, ինչպես Յանձնաժողովը, անհրաժեշտ չի համարում այդ գանգատն առանձին քննության առնել 8-րդ հոդվածի հիման վրա:

## IV. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառումը

44. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ մարմնի ընդունած որոշումը կամ որևէ այլ միջոցառում լրիվ կամ մասամբ հակասում է Կոնվենցիայից ... բխող պարտավորություններին, և եթե այդ կողմի ներպետական օրենսդրությունը նախատեսում է այդ որոշման կամ միջոցառման հետևանքների դիմաց միայն մասնակի փոխհատուցում, վնաս կրած անձին Դատարանի վճռով, անհրաժեշտության դեպքում, տրամադրվում է արդարացի բավարարում»:

45. Դիմողը պահանջել է հատուցում՝ նյութական և ոչ նյութական վնասի դիմաց, և իր ծախսերի ու ծախսերի փոխհատուցում:

## Ա. Վճարը

46. Պրո Տեյքսեյրա դե Կաստրոն առաջին հերթին պահանջել է 2.052.000 էսկուդո (PTE) այն երեք տարիների ընթացքում իր վաստակի կորստի դիմաց, որոնք նա իր վեցամյա ազատազրկման ժամկետից անց է կացրել բանտում: Իր այս պահանջը նա հիմնավորել է նրանով, որ երկու ոստիկանների միջամտության բացակայության դեպքում ինքը չեղ դատապարտվի: Ինչպես Գերագույն դատարանը նշել է իր 1994թ. նայիսի 5-ի դատավճռում՝ նրա ամենամյա աշխատավարձը 57.000 PTE է: Նա նաև պահանջել է 15.000.000 PTE իր վաստակի կորստի համար, քանի որ բանտից ազատվելուց հետո նա հեռացվել է աշխատանքից և թնրանյութեր վաճառողի պիտակավորման պատճառով չի կարողացել աշխատանք գտնել: Դիմոդը պահանջել է նաև 5.000.000 PTE՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Յաշվի առնելով այն փաստը, որ ինքը գտնվել է բանտում և դրա արդյունքում չի ունեցել որևէ վաստակ, նրա կինն ու որդին ստիպված են եղել քաղցելու և ինքն ապրել է մեծ

անհանգստություն: Իր դատապարտումից ի վեր նրա կյանքը եղել է նվաստացումների շարք. նա կորցրել է ընկերների և նրանից օտարացել են իր ընտանիքի անդամները:

47. Կառավարությունը վիճարկում է, որ չկա որևէ պատճառական կապ վիճարկվող վնասի և արձանագրված իրավախստման փաստի միջև, քանի որ հնարավոր չէ Ենթադրություններ անել, թե ոիմողի վիճակը կլիներ արդյոք այլ, եթե խախտված չլիներ նրա իրավունքը: Ըստ Կառավարության՝ իրավունքի խախտման փաստի ճանաչումն ինքնին հանդիսանում էր ոչ նյութական վնասի հատուցում:

48. Հանձնաժողովի պատվիրակը կարծիք է հայտնել, որ պահանջվող նյութական և ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պետք է վճարվի, եթե Դատարանը գտնի, ինչպես Վինդիշն ընդդեմ Ավստրիայի գործում (տես՝ 1990թ. սեպտեմբերի 27-ի վճիռը: Շարքեր, Ա թիվ 186, էջ 12, կետ 35), որ ոիմողի դատապարտումն ուղղակիորեն եղել է 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի ապացույցի օգտագործման հետևանք:

49. Դատարանը համամիտ էր այդ կարծիքին: Գործում առկա փաստաթղթերը վկայում են, որ ազատազրկման ձևով պատիժ չէր նշանակվի, եթե չլիներ երկու ոստիկանների միջամտությունը: Պրն Տեյքսեյրա դե Կաստրոյի վաստակի կորուստը՝ և՝ ազատազրկված լինելու ընթացքում, և՝ բանտից ազատվելուց հետո աշխատանք չգտնելու հետևանքով, փաստացի էին (չեն վիճարկել Կառավարության կողմից) և նրան իրավունք են տալիս ստանալու արդարացի բավարարում: Նմանապես, անվիճելի է, որ ոիմողը կրել է ոչ նյութական վնաս, որը չի կարող հատուցվել պարզապես իրավախստման փաստը ճանաչելով:

Յաշվի առնելով համապատասխան գործոնները և հարցը լուծելով արդարության հիմքերով՝ 50-րդ հոդվածի համաձայն Դատարանը նյութական և ոչ նյութական վնասի դիմաց տրամադրում է 10.000.000 PTE:

## Բ. Ծախսեր և ծախսեր

50. Ըստ Տեյքսեյրա դե Կաստրոյի՝ իր կրած ծախսերն ու ծախքերը ներառում են. ա/ 5.000.000 PTE՝ Պորտուգալիայի դատարաններում գործի քննության կապակցությանը՝ նկատի ունենալով, որ Պորտուգալական պետության կողմից վճարվել է միայն 35.000 PTE՝ որպես իրավաբանական օգնություն, թ/ 1.500.000 PTE՝ Հանձնաժողովում և Դատարանում՝ գործի վարույթի համար:

51. Ըստ Կառավարության՝ ոիմողի պահանջներն արդարացված չեն:

52. Հանձնաժողովի պատվիրակի կարծիքով, ի լուրման այն գումարների, որը ոիմողն ստացել է որպես իրավաբանական օգնություն, նրան պետք է տրամադրվի որոշակի գումար՝ Կոնվենցիայի մարմիններում վարույթների կապակցությամբ:

53. Դատարանը նշում է, որ գործին առնչվող ժամանակահատվածում ոիմողի փաստաբանը համաձայնել է հանդես գալու պարզապես իրավաբանական օգնության իրավաբանական համակարգի համաձայն՝ Պորտուգալիայի իշխանությունների կողմից վճարված գումարով: Նման հանգանաքներում, անձը, ում շահերը նա ներկայացրել է, պարտավոր չէ նրան վճարել լրացրելու հոնորար (տես՝ վերը նշված Վինդիշի վճիռը, էջ 13, կետ 37): Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ որպես իրավաբանական օգնություն վճարված գումարը չնչին է, և փաստաբանը կատարել է եական ծավալի աշխատանք՝ Դատարանը, հարցը լուծելով արդարության հիմքերով, դիմողին տրամադրում է 300.000 PTE՝ Պորտուգալիայում կրած ծախսերի և ծախքերի դիմաց:

54. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն նաև իրավաբանական օգնություն է ստացել Կոնվենցիայի մարմիններում: Դատարանը չի գտնում, որ Ստրասբուրգում գործի քննության կապակցությամբ կատարված ծախսերի և ծախքերի դիմաց պահանջված գումարները չափազանցված են: Յետևաբար, Դատարանն այս կապակցությամբ տրամադրում է 1.500.000 PTE, որից հանվում է 19.801.70 ֆրանկ, որն արդեն ստացվել է որպես իրավաբանական օգնություն:

## Գ. Տոկոսներ չվճարելու դեպքում

55. Դատարանին հայտնի տեղեկատվության համաձայն՝ սույն վճռի կայացման պահին Պորտուգալիայում օրենքով սահմանված տոկոսադրույթը տարեկան 10 տոկոս է:

## ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վճռում է՝ վեց ձայնով ընդդեմ մեկի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
  2. Վճռում է՝ միաձայն, որ անհրաժեշտություն չկա քննության առնելու, թե արդյո՞ք խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը,
  3. Վճռում է՝ միաձայն, որ անհրաժեշտություն չկա գործը քննության առնել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա,
  4. Վճռում է՝ ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, որ.  
ա/ պատասխանող պետությունը պետք է դիմողին եռամսյա ժամկետում վճարի հետևյալ գումարները.
    - (i) 10.000.000 (տասը միլիոն) էսկուդո՝ նյութական և ոչ նյութական վնասի դիմաց,
    - (ii) 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) էսկուդո՝ ծախսերի և ծախքերի համար՝ հանած 19.801.70 (տասնինը հազար ութ հարյուր մեկ և յոթանասուն սանտիմ) ֆրանսիական ֆրանկ, որը ենթակա է փոխակերպման էսկուդոյի՝ հարցի լուծնան ժամանակ գոյություն ունեցող տարադրամի կուրսով, և
  - բ/ պետք է վճարվի տոկոս՝ տարեկան 10 տոկոս տոկոսադրույթով, պետք է վճարվի տոկոս, վերոհիշյալ եռամսյա ժամկետի լրանալուց հետո մինչև արդարացի բավարարման վճարումը,
5. Մերժում է՝ միաձայն, արդարացի բավարարման վերաբերյալ պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, իրապարակված է Մարդու իրավունքների պալատում՝ դրույթ նիստում, Ստրասբուրգում, 1998թ. հունիսի 9-ին:

Ռուդոլֆ Բերնհարդտ  
Նախագահ

Հերբերտ Պետցոլդ  
Քարտուղար